Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 136
Վարչական տույժ նշանակելու մասին

«08» հունիսի 2018թ. ք. Երևան

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության պետ Ա.Քյարամյանս, վերանայելով Վրաստանի քաղաքացի Արման Արտուշի Վարդանյանի վերաբերյալ նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2018 թվականի ապրիլի 9-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Հյուսիսային մաքսատուն-վարչության աշխատակիցները Բավրայի մաքսային կետում զննության են ենթարկել Վրաստանից ՀՀ ժամանած, Վրաստանի քաղաքացի Արման Արտուշի Վարդանյանի կողմից շահագործվող «ՎԱԶ 2101» մակնիշի, 28OL996 պետհամարանիշի ավտոմեքենան և սրահի տարբեր մասերից հայտնաբերել մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխված 12 կգ քաշով «Օմեպրազոլ» տեսակի դեղորայք:

Փաստի առթիվ Վրաստանի քաղաքացի Արման Արտուշի Վարդանյանի նկատմամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածի հատկանիշներով կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն, իսկ հայտնաբերված դեղորայքը վերցվել և ի պահ է հանձնվել «Ձյունիկ տերմինալ» ՍՊԸ մաքսային պահեստ:

09.04.2018թ. Բավրայի մաքսային կետում տված բացատրությամբ Արման Արտուշի Վարդանյանը խոստովանել է, որ Վրաստանում ձեռք բերված «Օմեպրազոլ» տեսակի դեղորայքը թաքցրել է իր կողմից շահագործվող «ՎԱԶ 2101» մակնիշի, 28OL996 պետհամարանիշի ավտոմեքենայի սրահի տարբեր մասերում մաքսային հսկողությունից և տեղափոխել ՀՀ մաքսային սահմանով:

Արման Արտուշի Վարդանյանը 17.04.2018թ. թիվ 13-2/19476-18 ծանուցագրով 2018 թվականի մայիսի 3-ին հրավիրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ԻՀ ու ՎՎԻ վարչություն՝ իր նկատմամբ սկսված վարչական գործի վարույթին մասնակցելու համար, միաժամանակ նախազգուշացվելով, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 219-րդ հոդվածի համաձայն՝ չներկայանալու դեպքում գործի վարույթը կիրականացվի առանց իր մասնակցության, սակայն չի ներկայացել:

Համաձայն ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ փորձագետի 14.05.2018թ. թիվ 37691805 եզրակացության՝ փորձաքննությանը տրամադրված ապրանքը հանդիսանում է 10 հատանոց փաթեթավորմամբ, թվով 1840 հատ «Omezee Omeprazole Capsules, Omeprazole 20 mg Zee laboratories» տեսակի փայլաթերթիկ դեղամիջոց, որն իր բաղադրության մեջ թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր, պրեկուրսորներ, խիստ ներգործող և թունավոր նյութեր չի պարունակում, սակայն տվյալ դեղամիջոցը ՀՀ-ում գրանցված չէ և փորձագետի կողմից չի գնահատվել:

Իրավախախտման անմիջական օբյեկտ հանդիսացող ապրանքների մաքսային արժեքը պարզելու համար 04.06.2018թ. թիվ 13-2/1693949/-18 գրությամբ հարցում է կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային հսկողության վարչություն, որտեղից ստացված 05.06.2018թ. թիվ 8-1/1695592/-18 գրության համաձայն՝ 2018 թվականի ընթացքում ոչ ԵՏՄ անդամ երկրներից ՀՀ ներմուծված 30 դեղապատիճանոց փաթեթավորմամբ «Օմեպրազոլ» տեսակի դեղորայքի մաքսային արժեքը կազմել է 850-ից 1250 ՀՀ դրամ: Առաջնորդվելով

հաշվարկվել է Վրաստանի քաղաքացի Արման Վարդանյանի կողմից մաքսային հսկողությունց թաքցնելով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխված 10 հատանոց փաթեթավորմամբ, թվով 1840 հատ փայլաթերթիկ «Օմեպրազոլ» տեսակի դեղորայքի մաքսային արժեքը, որը կազմել է 520.720 դրամ:

Արման Արտուշի Վարդանյանը 07.05.2018թ. թիվ 13-2/23325-18 ծանուցագրով 2018 թվականի հունիսի 8-ին հրավիրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ԻՀ ու ՎՎԻ վարչություն՝ իր նկատմամբ սկսված վարչական գործի քննությանը մասնակցելու համար, միաժամանակ նախազգուշացվելով, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 219-րդ հոդվածի համաձայն՝ չներկայանալու դեպքում գործի քննությունը կիրականացվի առանց իր մասնակցության:

Այսպիսով, նյութերով պարզվել է, որ 2018 թվականի ապրիլի 9-ին Վրաստանից ՀՀ ժամանած, Վրաստանի քաղաքացի Արման Արտուշի Վարդանյանը իր կողմից շահագործվող «ՎԱԶ 2101» մակնիշի, 28OL996 պետհամարանիշի ավտոմեքենայի սրահի տարբեր մասերում թաքցնելով մաքսային հսկողությունից ՀՀ մաքսային սահմանով տեղափոխել է 12 կգ քաշով, թվով 1840 փայլաթերթիկ՝ 10 հատանոց հաբերով «Օմեպրազոլ» տեսակի դեղորայք, այսինքն թույլ է տվել ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում, ինչը հիմնավորվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, փորձագետի 14.05.2018թ. թիվ 37691805 եզրակացությամբ, ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության 05.06.2018թ. թիվ 8-1/1695592/-18 գրությամբ և Արման Վարդանյանի բացատրությամբ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Մաքսային օրենսգրքի 201-րդ, 206-րդ և 221-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Արման Արտուշի Վարդանյանին (ծնված՝ 13.03.1988թ., ազգությամբ հայ, Վրաստանի քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, բնակվող Վրաստան, ք. Նինոծմինդա, Ղարսի փողոց, 1 տուն, անձնագիր 07AH23681) ճանաչել զանցառու ՀՀ Մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով և նրան տուգանել մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխված 12 կգ քաշով, թվով 1840 փայլաթերթիկ՝ 10 հատանոց հաբերով «Օմեպրազոլ» տեսակի դեղորայք մաքսային արժեքի չափով՝ 520.720 դրամ:
2. Որոշման մասին հայտնել Ա.Վարդանյանին, պարզաբանելով, որ այն կայացնելուց հետո 10 օրվա ընթացքում կարող է բողոքարկել վերադաս մաքսային մարմին (ՀՀ մաքսային օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ մաս) կամ երկամսյա ժամկետում՝ վարչական դատարան (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ):

Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության պետ՝ **Ա.ՔՅԱՐԱՄՅԱՆ**